ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Հայկավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Իմ հայրենիք>> (3 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Ինքնակենսագրություն (Ձև 4).
5. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. Փետրվարի 18 -ից մինչև 2026թ մարտի 3-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10⁰⁰-ից 15 ⁰⁰-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2026թ.մարտի 5-ին՝ ժամը 14⁰⁰-ին Շիրակի մարզի Հայկավանի միջնակարգ դպրոցում. հասցեն՝Շիրակի մարզ, Ախուրյան համայնք,բն. Հայկավան,1-ին նրբ. 2-րդ փողոց, շենք 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝077 40 20 20 հեռախոսահամարով: